15. ՏՈՒՆ ՇԻՆՈՂ, ՏՈՒՆ ԱՎՐՈՂ ԿՆԻԿՆ Ա

Վախտի մեկին Մշեցիմ կէրտա թագավորիմ քաղաք։ Էդ թագավորին կէղնի իրեք տարով մշակ։ Իրեք տարին օր կը թմի, թագավոր կը բերա էդ մշկուն շատ օսկի ու ապրանք կիտա, կը ճամբա էրկիր։

Ժուկ ու ժամանակ մի կը մնա էդ Մշեցին, ուրին տարած օսկիք կը փըճըցու, էմլե կէրտա ղուրբաթ էն թագավորի քաղաք։

Մեկ օր թագավոր ուր աղջըկե հետ հ'ելած էր էդ քաղքի մեջ կը զվոներ։ Աղջիկ տեսավ ուր մշկուն, ճանչցավ, ասաց ուր պապուն.— Էդ մեր մշակն ա, էմլե էկեր ա։

Թագավոր կը խանչա, կը հարցու.— Տղա՛, հ'որի՞ն իս էկի, ես քղի օսկի շատ տվի, օր դու մեկ լե ղարիպուտեն չգեր։

— Թագավոր ապրած,— կասա,— քու տված օսկիք հ'ըմեն փըճըցուցի։

Թագավորի աղջիկ կըսա.— Մեղավոր էդի չէր, էդոր կնիկն ա։

Թագավոր էդ խոսքի վրեն կը հերսոտի, վըր ուր աղջըկան.

— Ի՞նչ գինաս մեղավոր էդոր կնիկն ա,— կասա։

— Էդոր կնիկ աղեկ կնիկ էղներ, ինքը թե փըճըցուցող էղներ, կնիկ ժողովող պտի էղներ։

Էդ խոսքի վրեն թագավոր նեղեցավ, խանչեց զուր մշկներ, ուր աղջիկ տվեց էնդոնց ձեռ, ասաց.—Տարե՛ք, յոթ էրկիր զվոցուցե՛ք, հարցուցեք, հարցուցեք, մեկ գոթի մարդում տվեք, հալա տեսնիմ իմ աղջիկ ուր մարդուն ի՛մալ կը կառավորա։

Մշկներ կառնին, կէրտան, յոթ էրկիր ժուռ գիգան, մեկ գոթի տղե մի կը գտնին, կիտան էդ տղին։

Աղջիկ կաչքա, էդ տղեն հըմալ գոթի ա, օր ուր ակնջով փոջի չաժի։

Մեկ օր թագավորի աղջիկ մեկ էշ կառնի, էդ տղեն կը ճամբա մորին փետ բերելու։ Կէրտա, բառնա ու գիկա։ Կես ճամբուն կաչքա մեկ խագած-կապած մարդ գելի էդոր հ'առեջ։

— Տղա՛,— կասա,— առանց փարի զէդ փետ տուր ընձի։

— Հա՛ն, աղա, թըխ էղնի քզի, առնի քո զատեն։

Կիտա ու գիկա տուն։ Թագավորի աղջիկե կըսա.— Գացի, փետ բերի, կես ճամբուն մեկ հ'ելավ հ'առեջսի, առանց փարի տվեցի, ջնաց։

— Շատ աղեկ էրիր,— ըսաց աղջիկ,— հըմա դու ժիր էղիր, ղատի, թըխ խըլխ քու դատում ուտի։

Շուտ էմլե թագավորի աղջիկ էշ սազեց, ճամբեց փետի էդ գոթի մարդ։

Էմլե ըռաստ էկավ, ասաց.— Փետ տո՛ւր ընձի, քզի էրկու խըրատ տամ։

— Ըսա՛ խրատդ,— ասաց տղեն,— տվեցի՛ փետեր, դ'ոաց։

— Մարդու մեկի հ'առեջ կէրտաս, մեկ ճերմակ մաճիթիեի մշակ կէղնիս քու հոժար կամքով։ Մեկ գիկա, խակառակին քզի տասնապատիկ կիտա, չէղնի էրթա՛ս, էն քու առաջվա հախին մնաս։ Մեկ էլ՝ քերվնճի կէղնիս, գիշեր դաշտ կը մնաս՝ չէղնի ձորու մեջ պառկիս, յան քու քարվան թափիս, հ'ելի ղարի գլոխ, յա դուրան տեղ մի, նոր քու քարվան թափա։

Տղեն էմլե գարտակ էկավ տուն, աղջիկեն ըսեց.— Հ'էսօր լե էն մարդ էկավ հ'առեջ, էրկու խրատ տվեց, փետեր տվեցի էնդոր։

Աղջիկ ըսեց.— Էնի մարդ չէ, հրիշտակ ա, էնդոր խրատ աղեկ քու մտքի մեջ պայա։

Վախտ շատ չընցավ։ Էն տղեն գնաց էղավ բազրկան բաշու մշակ։ Օր մի օրերուց եբօր էդ բազրկան զուր գանկեր կապեց քաղ-քից մեկել քաղաք տանելու՝ օր մի չումի հ'իրկուն գացին-գացին, չկրցան ձորու միշից դուս գին, դուրան տեղ մի էդ ձորու մեջ բա-հըրկանի մշկներ զուրանց բեռներ թափեցին։ Էդ տղեն զուր փայ չորիկ բառցած հ'ելավ դարի գլոխ, նոր թափեց։

Կես գիշեր չէր հ'ընցի, իմալ մեկ անձրև էկավ, օր էդ ձորը լերնե բերան կը լմլըմեր, կէրտեր։

Ձորու մեջ ուրանց բեռներ թափող մշկներ անճախ փախան, պրծան, մնացած գանկեր ու ջորիք սելավ տարավ, խեղդեց։

Բաղրկան բաշին էկավ, տեսավ օր մշկներու բեռներ ՝ընսեն սելավ տարեր էր, զարկեց շոքերուն ու լաց։ Դարձավ ըսեց մշկը-ներուն.— Ըպա Թամբալ դո՛ր ա։

— Թամբալ ուր խաթար ջորիք առավ, հ՝ելավ դարի գլոխ։

Հ՝ելան դացին դարի գլոխ, տեսան օր հ՝ինք լե սալամաթ ա, ուր ջորիք ու բեռներ լե։

Բաղրկան բաշին շատ ուրխըցավ, դուվաց ուր մշկներու հ՝առեջ Թամբալի խելացուտեն։

Էդ տեղ մեկ ջրխոր կեր, ջորիք լև ծարավ ին, էդ ջրխորին լե մեկ սովորուտեն կեր. որն օր մտեր մեջ, դուս չէր հ՝իկեր։

— Արեք,— ըսեց բաղրկան բաշին,— մեկըմ ձեր մոտեն մտեք ջրխոր, ջուր քաշեք, ջորիներ ջրինք։

Մշկներ հ՝ըմեն վախցան, Թամբալ էկավ հ՝առեջ, մտավ ինե։ Ջուր տվեց պրծավ, իշկեց դուռ մի բացվավ, զուրին քաշին տա-րին հ՝օտիմ մեջ։ Հ՝օտի մեջ նստեր էր ճերմակ մուրուս հալիվորմ, օսկի սինիմ հ՝առեջ դրեր էր, օսկի մուկ մի, օսկի կատու մի մեջ կը խազեն։ Մեկ տղա, մեկ աղջիկ հ՝եռուն կայնած կաչքին։

Էդ տղեն ներս մտավ, օսկի մուկ խաղաց ու խարցուց.

— Այ տղա՛, աշխարհ ի՞նչ ա քաղցր։

— Ինչ օր մարդու սրտին դուր գիկա, է՛ն ա քաղցր։

— Դու չկրցար գտեր էր, գտի,—ասաց Մուկը։

— Սերը քընց ղմեն քաղցր ա,— ասաց տղեն։

Էդ խոսքի վրեն մուկ դարձավ մեկ հուրնիկ հրեղեն աղջիկ, կայնավ էդ տղի հ՝առեջ, ըսեց.— Հ՝ուզե տամ, խողաթին։ Շատեր իղա գետնի տակ մենք հողին հավասար էրինք։ Մարդ չկարցավ ալիմ պատասխան տեր, դու տվեցիր։

Աղջիկ հանեց իրեք հատ մեկ մեկ օխանոց նուռ, տվեց տղին, մեկի մեջ ալմաստ էր, մեկի մեջ՝ յաղութ, մեկի մեջ՝ զմրութ։

Էդ աղջիկ էմլե ասաց.— Տղա՛, հ՝ուզե տամ։

Էն տղեն ու աղջիկ օր կաչքեին, հ՝առեջ էկան, տղի ձեռք պա-դին ու ըսին.

— Խնդրե՛, ղմզի հ՝ուղա։

— Ի՞նչ կիտաք,— ըսեց տղեն,— օր զձղի հ՝ուզիմ։

— Առ մեր մատնիք, օր թանկագին ա, մըզի իդա տեղից աղատա։

Տղեն մատնիք առավ, դարձավ աղջիկե.— Իմ խնդիրք քենե իդա խըտբ ա, օր իդա տղեն ու աղջիկ ընձի բաշխիս։

Խրեղեն աղչիկ բաշխեց զէդ տղեն ու աղչիկ։ Տղեն առավ զուբ նռեր ու էդ տղեն ու աղչիկ, ջրխորից դուս հ'ելան։

Բազրկան աճեպ մնաց օր Թամբալ տղեն սաղ-սալամաթ դուս պրծավ, մեկ աղչիկ ու տղեմ էլ ղուս բերեց։

Տվեց էն իրեք նուռն բազրկան բաշուն, ճամբեց տուն։ Հ'ինք առավ բազրկան բաշու ապրանք, գնաց ուրիշ թագավորի էրկիր։

Երբոր մտան քաղաք, տեսան թալալ կը բռռա.

— Ո'րն օր թագավորի տղեն ու աղչիկ գտնի, թագավոր ուր թագավորուտենի իրեք վայ էդոր կիտա՞։

Էն տղեն ու աղչիկ շաշմած կաչքեին, ինչ ա, Թամբալ շուտ մի հասկըցավ։ Գնաց, ըսեց թալալին։ Թալալ բռնեց էդ տղի ձեռ ու թագավորի հ'առեջ տարավ, ըսեց.— Քու տղեն ու աղչիկ գտող էս մարդն ա։

Թագավոր շատ ուրխըցավ։ Թագավորուտենի չորս փայ լե տվեց։ Էդ տղեն լե գնաց թագավորի աղչիկն ու տղեն բերեց, տվեց թագավորին։

Տղեն ուր աղի գանկեր թանգ-թանգ գնով ծախեց, զուր բեռ էմլե բռնեց, գնաց դեմի ուր էրկիր, տարավ գանկեր թասլիմ էրեց ուր աղին, ջնորհակալուտեն առավ, գնաց ուր տուն։

Թագավորի աղչիկ օր տղին տեսավ, վազեց, գնաց հ'առեջ. փաթթվան հ'իբար վզով, էկան տուն։

Տղեն դարձավ, ուր կնկա մոտեն հարցուց։

— Էն նռեր օր բազրկան բաջու հետ ճամբի, առա՞ր, կերար։

— Ի՞նչ ուտեմ, մարդ,— ըսեց,— էնգոնք հ'ըմեն թանկագին քար են։

— Է, օր հ'ըմալ ա, կնիկ, մենք քու հորեն ջատ հարուստ լղանք, թագավորի մալ չորս փայ էրի, բերի։

Օսկու սնտկներ քաշեց նես։

Մնաց ժուկ ժամանակ մի, թագավոր[1] աղչկա խսեն լսեց։ Հ'ելավ էկավ ուր աղչիկա տեսուտեն։

Էկավ տեսավ, ի՞նչ տեսնի, ուր աղչիկա քոշք ու սարեն քընց ուր խորոտ ա շինած, գնաց խոնախ էղավ։

Քառսուն օր կերան խմին, ուրախուտեն էրին։ Քառսուն օր օր թմավ, աղչիկ էկավ պապու հ'առեջ, ըսեց.— Ի՞մալ ա, ի՞մ պապ, ի՞մ խոսքն ա, թե՞ քում։

---

1 Բնագրում՝ թագավոր չիք (Ծ. Կ.)։

— Քու խոսքն ա, լա՛ռ,— ասաց պապ,—օղորդ օր տուն շինող կնիկն ա, «Իրիկ դրսի պատ ա, կնիկ ներսի պատ»։

Թագավոր հ՝ելավ գնաց ուր տուն։ Փեսին լե բերեց էրեց սատրիազամ։ Քանիմ տարի ետք հ՝ինք մեռավ. տղա չուներ, հ՝ինքն էր, են մեկ աղջիկ։ Փեսեն էղավ Թագավոր։

Էն հասավ ուր մուրազին, դուք լե հասիք ձեր մուրազին։